

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՏԱՎՈՒՇ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի դիմուլ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարուղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Ո՞ր է պրոտիստն է շարժվում կեղծ ոտքերի միջոցով.**

- 1) հողաթափիկ ինֆուզորիան
- 2) լամբլյան
- 3) կանաչ էվգլենան
- 4) ամեռան

2 **Ո՞ր շարքում է ճիշտ նշված կենդանի օրգանիզմների դասակարգման միավորների հաջորդականությունը.**

- 1) վերնաթագավորություն, թագավորություն, դաս, կարգ, ընտանիք, ցեղ, տեսակ
- 2) վերնաթագավորություն, թագավորություն, կարգ, դաս, ցեղ, ընտանիք, տեսակ
- 3) դաս, կարգ, տեսակ, ընտանիք, տիպ, թագավորություն
- 4) դաս, տեսակ, կարգ, ընտանիք, տիպ, վերնաթագավորություն

3 **Սնկերն ունեն և՛ բույսերին, և՛ կենդանիներին բնորոշ հատկանիշներ: Նշել այն տարրերակը, որտեղ ճիշտ բաշխված են այդ հատկանիշները:**

	Կենդանիներին բնորոշ հատկանիշներ	Բույսերին բնորոշ հատկանիշներ
1)	հարաբերականորեն անշարժ են	չունեն քլորոֆիլ
2)	սնունդը կլանում են լուծված նյութերի ձևով	արտադրում են միզանյութ
3)	ունեն խիտին	ունեն բջջապատ
4)	բազմանում են սպորներով	հետերոտրոֆ են

4 **Ի՞նչ բաժիններից է կազմված հասուն գորտի ողնաշարը.**

- 1) պարանոցային, կրծքային, իրանային, սրբանային, պոչային
- 2) պարանոցային, կրծքային, իրանային, պոչային
- 3) պարանոցային, իրանային, սրբանային, պոչային
- 4) կրծքային, իրանային, գոտկային, սրբանային, պոչային

5 **Թվարկված մակարույժ որդերից ո՞րն է պատկանում կլոր որդերի տիպին.**

- 1) եզան երիզորդը
- 2) մարդու ասկարիդը
- 3) էխինոկոկը
- 4) լյարդի ծծանը

6

Ո՞ր կարգերն են մտնում սողունների դասի մեջ.

- 1) թեփուկավորների և կնճիթազլուխների
- 2) կոկորդիլոսների և պոչավորների
- 3) պոչավորների և անպոչների
- 4) կրիաների և անոտների

7

Ո՞ր հատկանիշն է բնորոշ և երկենցաղներին, և թռչուններին.

- 1) ունեն եռախորշ սիրտ
- 2) մաշկը պատված է փետուրներով
- 3) էնդոթերմ են
- 4) ողնաշարավոր են


8

Թվարկված կենդանիներից ո՞րի ձվաբջիջը հարուստ չէ դեղնուցով.

- 1) շան
- 2) աղավնու
- 3) բաղի
- 4) մողեսի

9

Ո՞ր թվով է նշված հարթ մկանը:



10

Ո՞ր պնդումն է սխալ մարդու արյան վերաբերյալ.

- 1) պլազմայում գտնվում են α և β ազյուտինիններ
- 2) ազյուտինինները և ազյուտինոգենները պայմանավորում են արյան 4 խմբերը
- 3) էրիթրոցիտների մակերեսին գտնվում են A և B ազյուտինոգեններ
- 4) էրիթրոցիտների մակերեսին գտնվում են α և β ազյուտինիններ

11

Նշվածներից որո՞նք են գտնվում մարդու մաշկի վերնամաշկում.

- 1) քրտնագեղձերը
- 2) շոշափական ընկալիչները
- 3) գունանյութ պարունակող բջիջները
- 4) ճարպագեղձերը

12

Մարդու օրգանիզմում վիտամինների գործառույթի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) հանդիսանում են էներգիայի աղբյուր
- 2) նպաստում են էրիթրոցիտների առաջացմանը
- 3) մասնակցում են արյան մակարդմանը
- 4) նպաստում են օրգանիզմի ածին

13

Մարդու ո՞ր ոսկորներն են միացած սերտաճման միջոցով.

- 1) ողնաշարի սրբանային բաժնի ողերը
- 2) ողնաշարի գոտլային բաժնի ողերը
- 3) վերին և ստորին ծնոտները
- 4) կրծոսկրը և կողոսկրերը

14

Որտե՞ղ են գտնվում միզարձակման ընկալիչները մարդու օրգանիզմում.

- 1) ողնուղեղի գոտլային հատվածում
- 2) ողնուղեղի սրբանային հատվածում
- 3) միզապարկում
- 4) երիկամներում

15

Ի՞նչ է բնորոշ ոչ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) ժամանակավոր են
- 2) ժառանգվում են
- 3) անհատական են
- 4) ձեռքբերովի են

16

Մարդու գլխուղեղի մեծ կիսազնդերի կեղևի ո՞ր բլթում է գտնվում լսողական գոտին:

- 1) զազաթային
- 2) քունքային
- 3) ճակատային
- 4) ծոծրակային

17

Ի՞նչ է կատարվում ներշնչման ժամանակ մարդու օրգանիզմում.

- 1) կրծքավանդակի ծավալի փորձացում
- 2) միջկողային մկանների թուլացում
- 3) միջկողային մկանների կծկում
- 4) ստոծանու մկանների թուլացում

18

Գյուղակողի օղակը կազմվում է, եթե

- 1) ածխածնի 2-րդ ատոմը միանում է ածխածնի 6-րդ ատոմի թթվածնին
- 2) ածխածնի 2-րդ ատոմը միանում է ածխածնի 5-րդ ատոմի թթվածնին
- 3) ածխածնի 1-ին ատոմը միանում է ածխածնի 5-րդ ատոմի թթվածնին
- 4) ածխածնի 1-ին ատոմը միանում է ածխածնի 6-րդ ատոմի թթվածնին

19


Տրված օրգանական միացություններից, որոնք են հանդիսանում մակրոմոլեկուլներ.

1. սպիտակուցները
 2. բազմաշաքարները
 3. վիտամինները
 4. պարզ ճարպերը
 5. նուկլեինաթթուները
-
- 1) 3,4,5
 - 2) 1,2,3,4,5
 - 3) 1,2,4,5
 - 4) 1,2,5


20

Հետևյալ օրգանական միացություններից, որոնք են մտնում եռզիցերիդի կառուցվածքի մեջ.


1.




2.



3.



4.



- 1) 1,2
- 2) 3,4
- 3) 1,2,4
- 4) 1,3

21

Զրի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) 4°C -ից ցածր ջերմաստիճանի դեպքում զրի խտությունը սկսում է նվազել
- 2) զրի մոլեկուլներն ունեն շատ փոքր կոհեզիա
- 3) զրի մոլեկուլները միմյանց միացած են կովալենտ կապերով
- 4) զուրը մոլեկուլը բաղկացած է ջրածնի երկու ատոմից՝ ջրածնային կապով միացած թթվածնի մեջ ատոմին

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) տարրի տարբեր իզոտոպներն ունեն նույն թվով պրոտոններ և էլեկտրոններ, սակայն տարբեր թվով նեյտրոններ
- 2) տարրի տարբեր իզոտոպներն ունեն նույն թվով պրոտոններ, էլեկտրոններ, նեյտրոններ
- 3) իզոտոպները տարրի ձևերն են, որոնք նման են զանգվածով
- 4) իզոտոպները տարրի ձևերն են, որոնք նման են նեյտրոնների թվով


23

Հեմոգլոբինի մոլեկուլում, որ ամինաթթուն է փոխարինվում վալինի, որը մանգաղաքջային սակավարյունություն հիվանդության առաջացման պատճառ է հանդիսանում.

- 1) ալանին
- 2) գլյուտամինաթթվի ամիդ
- 3) ասպարագինաթթու
- 4) գլյուտամինաթթու

24

Պատկերված են օրգանոիդների էլեկտրոնային միկրոնկարներ: Ո՞ր օրգանոիդն է բացակայում է բարձրակարգ բույսերի քիչներում:



- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

25

Ընտրել Փերմենտի մրցակցային արգելակիչի վերաբերյալ ճիշտ պնդումը.

- 1) արգելակիչը և ֆերմենտը պայքարում են սուրստրատին միանալու համար
- 2) խթանում է ֆերմենտի աշխատանքը՝ կապվելով ֆերմենտի ակտիվ կենտրոնի հետ
- 3) արգելակում է ռեակցիայի ընթացքը՝ կապվելով ֆերմենտի ակտիվ կենտրոնին
- 4) արագացնում է ռեակցիայի ընթացքը՝ կապվելով սուրստրատին





26

Հեղուկ խճանկարային մողելի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:


- 1) ջերմաստիճանի նվազման հետ բջջաթաղանթի հոսունությունը նվազում է
- 2) չհագեցած ճարպաթթուների պոչերը ծոված են
- 3) որքան ֆոսֆոլիպիդային պոչերը չհագեցած են, այնքան թաղանթը հոսելի է
- 4) որքան երկար է ֆոսֆոլիպիդային պոչը, այնքան ավելի հոսուն է թաղանթը

27

Ի՞նչ տեղի կունենա, եթե բուսական բջիջները 30 րոպե պահվեն սախարողի խիտ լուծույթի մեջ: Ստորև բերված աղյուսակից ընտրել ճիշտ պատասխանը:

	Փորձի ընթացքում ջրի շարժը	Բջիջը տեղադրված է սախարողի խիտ լուծույթի մեջ
1)		բջջում ջրային պոտենցիալն հավասար է սախարողի լուծույթում ջրային պոտենցիալին և ջուրը շարժվում է դեպի բջիջ
2)		բջջում ջրային պոտենցիալն ավելի բարձր է, քան սախարողի լուծույթում և ջուրը շարժվում է դեպի բջիջ
3)		բջջում ջրային պոտենցիալն ավելի ցածր է, քան սախարողի լուծույթում և ջուրը շարժվում է բջիջի դուրս
4)		բջջում ջրային պոտենցիալն ավելի բարձր է, քան սախարողի լուծույթում և ջուրը շարժվում է բջիջի դուրս

28 ԱԵՖ-ի հիդրոլիզի յուրաքանչյուր ռեակցիայի ժամանակ ինչքան էներգիա է անջատվում.



- 1) 1-ում և 2-ում՝ 30,5 կՋմոլ⁻¹ էներգիա, իսկ 3-ում՝ 14,2 կՋմոլ⁻¹ էներգիա
- 2) բոլոր ռեակցիաների ժամանակ 30,5 կՋմոլ⁻¹ էներգիա
- 3) 1-ում և 3-ում՝ 30,5 կՋմոլ⁻¹ էներգիա, իսկ 2-ում՝ 14,2 կՋմոլ⁻¹ էներգիա
- 4) 1-ում և 2-ում՝ 14,2 կՋմոլ⁻¹ էներգիա, իսկ 3-ում՝ 30,5 կՋմոլ⁻¹ էներգիա

29 Ո՞ր բակտերիաներն են քեմոսինթեզող.


- 1) քացախաթթվային բակտերիաները և ծծմբաբակտերիաները
- 2) նիտրիֆիկացնող բակտերիաները և երկաթաբակտերիաները
- 3) կաթնաթթվային բակտերիաները և ծծմբաբակտերիաները
- 4) կաթնաթթվային բակտերիաները և երկաթաբակտերիաները

30 Ո՞ր միացությունը չի արտադրվում բույսերի կողմից.

- 1) օքսիտոցին
- 2) աբսցիզոաթթու
- 3) զիբերելին
- 4) առուսին

31

Նշել սպիտակուցի կառուցվածքային մակարդակների ճիշտ հաջորդականությունը (պարզից բարդ):



- 1) 2,3,4,1
- 2) 1,2,4,3
- 3) 2,3,1,4
- 4) 3,2,4,1

32

Ինչպե՞ս է կոչվում օրգանիզմների հատկանիշները և գարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու հատկությունը.

- 1) ժառանգականություն
- 2) փոփոխականություն
- 3) գենոտիպ
- 4) ֆենոտիպ

33

Ի՞նչ արդյունք է ստացվում հետերոզիգոտ և հոմոզիգոտ ռեցեսիվ առանձնյակների միահիբրիդ խաչասերման ժամանակ ոչ լրիվ դոմինանտուրյան դեպքում.

- 1) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 2) ֆենոտիպային միակերպություն
- 3) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 4) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի

34

Կորիզակում տեղի է ունենում՝

- 1) ածխաջրերի սինթեզ
- 2) ոիբոսոմների բաղադրամասերի ձևավորումը
- 3) լիպիդների կենսասինթեզը
- 4) ԱԵՖ-ի սինթեզը

35

Տեսակների միջև գործող ո՞ր փոխարարելությունն է օգտակար երկու տեսակների համար.

- 1) կոմենսալիզմը
- 2) մուտուալիզմը
- 3) ամենսալիզմը
- 4) գիշատչությունը

36

Ինչի՞ արդյունքում կարող է տեղի ունենալ նոր տեսակների առաջացում նախկին արեալի ներսում նույն տեսակի պոպուլյացիաներից.

- 1) մոդիֆիկացիոն փոփոխականության
- 2) սիմպատրիկ տեսակառաջացման
- 3) ալոպատրիկ տեսակառաջացման
- 4) կոնվերգենցիայի

37


Ստորև նկարում ներկայացված է *Ammophila arenaria* բույսի ոլորված տերևի լայնական կտրվածքի կեկտրոնային մանրադիտակով արված պատկերը:
Օգտվելով պատկերից նշիր, թե որ պնդումը ճիշտ չէ.



- 1) արտաքին (ստորին) վերնամաշկը ունի խիտ կուտիկուլա և հերձանցքներ
- 2) բոլոր հերձանցքները գտնվում են ներքին վերնամաշկի վրա
- 3) տերևի ներսում կան խորություններ, որոնք շրջապատված են քլորոպլաստներով լի մեզոֆիլի բջիջներով
- 4) ներքին վերնամաշկի մազիկները նվազեցնում են տերևի մեջ օդի հոսքը

38

Լաբորատորիայում ստացվել են մոր, երեխայի և չորս տղամարդկանց արյունից անջատված ԴՆԹ: Ստացվել են գենումի պոլիմորֆ հատվածների ԴՆԹ ֆրազմենտներ, որոնք այնուհետև անջատվել են գել էլեկտրոֆորեզի մեթոդով: Էլեկտրոֆորեզի արդյունքները բերված են ստորև բերված նկարում: Որոշեք, թե որ նմուշն է պարունակում երեխայի հոր ԴՆԹ-ն:



(39-40) Փորձերը ցույց տվեցին, որ ի-ՌՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդների 26%-ը աղենինային է, 17%-ը՝ գուանինային, 37%-ը՝ ցիտոզինային:

39

Գտնել աղենինային նուկլեոտիդի տոկոսը ՌՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՌՆԹ-ն.

- 1) 32
- 2) 20
- 3) 23
- 4) 27

40

Գտնել ցիտոզինային նուկլեոտիդի տոկոսը ՌՆԹ-ի մոլեկուլի այն հատվածում, որից ստացվել է տվյալ ի-ՌՆԹ-ն.

- 1) 32
- 2) 27
- 3) 23
- 4) 37


41

Ո՞ր կառուցվածքային բանաձեր (նշված է ձախ այունակում) որ ածխաջրին է (նշված է աջ այունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքային բանաձեր


Ածխաջրեր

A.




1. սախարոզ
2. α -ֆրուկտոզ
3. α -գլյուկոզ
4. β -գլյուկոզ
5. մալթոզ


B.




C.



D.



E.



42

Ո՞ր հատկանիշը (նշված է ձախ մասում) բույսերի ո՞ր դասին (նշված է աջ մասում) է առավել բնորոշ: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հատկանիշ

Դաս

- | | |
|---|--------------------|
| A. պաշարանյութերը էնդրապերմում են | 1. միաշաքիլավորներ |
| B. սերմնամաշկը հեշտ է անջատվում. | 2. երկշաքիլավորներ |
| C. փնջած արմատային համակարգ | |
| D. ծաղկի անդամների թիվը երեքի բազմապատիկն է | |
| E. աղեղնաջիղ տերևներ | |
| F. առանցքային արմատային համակարգ | |
| G. ցողունում կամքիումի շերտ | |

43

Ո՞ր սպիտակուցին (նշված է աջ սյունակում) ո՞ր կառուցվածքն (նշված է ձախ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածք

Սպիտակուց

- | | |
|--|---------------|
| A. կառուցվածքային սպիտակուց է | 1. հեմոգլոբին |
| B. բաղկացած է երեք պոլիպեպտիդային շղթաներից | 2. կոլագեն |
| C. պոլիպեպտիդում գրեթե յուրաքանչյուր երրորդ ամինաթթուն գլիցին է | |
| D. ֆիբրիլյար սպիտակուց է | |
| E. գլոբուլյար սպիտակուց է | |
| F. բաղկացած է չորս պոլիպեպտիդային շղթաներից | |
| G. յուրաքանչյուր պոլիպեպտիդային շղթա պարունակում է մեկ հեմ խումբ | |

44

Ո՞ր գեղձին (նշված է աջ սյունակում) ո՞ր հորմոնն (նշված է ձախ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հորմոն

- A. արիյոդիրոնին
- B. աղբենապին
- C. ինսուլին
- D. սոմատոտրոպին
- E. զյուկազոն
- F. նոր աղբենապին
- G. թիրոիդ խթանող հորմոն
- H. յուտեինիզացնող հորմոն

Գեղձ

- 1. աղենոհիպոֆիզ
- 2. մակերիկամներ
- 3. վահանաձև գեղձ
- 4. ենթաստամոքսային գեղձ

45

Ո՞ր հիվանդությունը (նշված է աջ սյունակում) ո՞ր հատկանիշին (նշված է ձախ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հիվանդություն

- A. Հանթինգթոնի հիվանդություն
- B. ալբինիզմ
- C. ցիստիկ ֆիբրոզ
- D. Թեա Սաքսի հիվանդություն
- E. ախոնդրոպլազիա
- F. մանգաղարջային սակավարյունություն
- G. ֆենիլկետոնուրիա

Հատկանիշ

- 1. դոմինանտ
- 2. ռեցեսիվ

46

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆազով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բակտերիաֆազի ԴՆԹ-ի ներարկում բակտերիայի մեջ
2. պոչային ելունների ամրացում բջջաթաղանթին
3. բակտերիաֆազի սպիտակուցների սինթեզ
4. բջջաթաղանթի <<լուծում>>
5. նոր բակտերիաֆազերի ձևավորում
6. բակտերիաֆազի ԴՆԹ-ի սինթեզ
7. բակտերիայի ռչնչացում

47

Նշել գլիկոլիզի պրոցեսում ռեակցիաների ճիշտ հաջորդականությունը.

1. պիրուվատի առաջացում
2. ֆոսֆոյուրիոզի ֆոսֆորուկտոզի առաջացում
3. տրիոքֆոսֆատների առաջացում
4. ֆրուկտոզ բիֆոսֆատի առաջացում
5. գլյուկոզի ֆոսֆորիլացում ԱԵՖ-ով
6. տրիոքֆոսֆատից ջրածնի հեռացում և տեղափոխում ՆԱԴ-ի մոլեկուլի վրա

48

Ինչպիսին է ֆոտոսինթեզի նշված գործընթացների հաջորդականություն: Նշել ճիշտ հաջորդականություն:

1. մոլեկուլային թթվածնի առաջացում
2. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
3. քլորոպլաստը լուսավորվում է տեսանելի լույսով
4. ջրի ֆոտոլիզ
5. ածխաջրերի առաջացում
6. քլորոֆիլի մոլեկուլը վերականգնում է էլեկտրոնի կորուստը

49

Ինչպիսի՞ն է գործընթացների հաջորդականությունը մարդու հավասարակշռության զգայության իրականացման ժամանակ՝ սկսած հավասարակշռության խախտման պահից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նյարդային ազդակի առաջացում ընկալիչում
2. մկանի կծկում
3. մարմնի դիրքի վերականգնում
4. նյարդային ազդակի հաղորդում
5. ընկալիչների գրգռում
6. մարմնի դիրքի փոփոխություն
7. հավասարակշռության կենտրոնում տեղեկատվության վերլուծում
8. պարկիկներում կրային բյուրեղների շարժում

50

Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ է տեղի ունենում արյան շրջանառությունը՝ սկսած ներքին օրգանից՝ լյարդից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. լյարդի երակ
2. աջ նախասիրտ
3. քոքային երակ
4. աջ փորոք
5. քոքային զարկերակ
6. առյտա
7. ձախ փորոք

51

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր բույսերի սեռական բազմացման ժամանակ: Նշել ճիշտ հերթականությունը.

1. փոշոտում
2. փոշեխողովակի առաջացում
3. սերմի առաջացում
4. սերմնաբջի և ձվաբջի միաձուլում
5. միկրոսպորի առաջացում
6. փոշեխողովակի ներթափանցում սերմնասկզբնակ

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. հողվածոտանիների մարմինը պատված է Էկզոկմախրով
2. փշամորթներին բնորոշ է ամբուլակրալ համակարգը
3. խմորասնկերը բազմանում են անսեռ եղանակով՝ բողբոջմամբ
4. կրծիկային ձկները չունեն ծնոտներ, ունեն խտիկային կափարիչներ, չունեն լողափամփուշտ
5. պոլիպ հիդրան ունի արտազատական և շնչառական օրգաններ, որոնցով հեռացնում է ազոտ պարունակող նյութերը
6. Փլուեմը փոխադրող հյուսվածք է, կազմված է կենդանի բջիջներից, որոնք տեղափոխում են բույսի սինթեզած օրգանական նյութերը
7. քսիլեմը կազմված է զլանաձև խոռոչներով կենդանի բջիջներից, որոնք ջուրն ու հանքային նյութերը տեղափոխում են դեպի բույսի ցողուն և տերևներ

53

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

1. մարդու մարմնի երկրորդ պաշտպանական զիծը դա ձեռքբերովի իմունիտետն է
2. մոնոկլոնալ հակամարմիններն առաջանում են տարբեր բջիջներից և արտադրում են տարբեր հակամարմիններին բնորոշ հակածիններ
3. հիստոմինի արտազատումը բերում է արյունատար անոթների նեղացմանը
4. ասպիրինը և իբուպրոֆենը ճնշելով պրոստագլանդինների արտադրությունը թուլացնում են ցավը
5. ներքին բնածին պաշտպանությանը մասնակցում են ֆազոցիտոդ և բնական քիլեր բջիջները
6. վիրուսով վարակված բջիջներն արտադրում են ինտերֆերոններ, որոնք կապվում են մոտակա չվարակված բջիջների պլազմային թաղանթի ընկալիչներին

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. հակամարմնի յուրաքանչյուր մոլեկուլ կազմված է երկու պոլիպեպտիդային շղթաներից
2. դիսրուպտիվ ընտրությունը տեղաշարժում է պոպուլյացիայի ընդհանուր կազմը՝ ընտրելով ծայրահեղ ֆենոտիպերից մեկը
3. ամիլոզն առաջանում է β -գլյուկոզի մոլեկուլներից կոնդենսացման միջոցով
4. նատրիում-կալիումական պոմպը սպիտակուց է, որը ներդրված է բջջաթաղանթում
5. կրոնվերգենցիայի հետևանքով առաջացած նմանությունները կոչվում են հոմոլոգ
6. միտոքոնդրիումների արտաքին թաղանթը հարթ է, իսկ ներքին թաղանթը առաջացնում է կատարներ
7. քլորոպլաստների ստրոման պարունակում է Կալվինի ցիկլի ֆերմենտներ, շաքարներ, օրգանական թթուներ

55

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. ֆիբրինոգենը կատալիզում է թրոմբինի վերածումը թրոմբի
2. խոսելիս ձայնախորշը լայնանում է, լռելիս՝ նեղանում
3. բոքերը պատված են հարք մկանային հյուսվածքի միաշերտ բաղանքով, որը նապաստում է թոքերի կծկմանը և ընդարձակմանը
4. բարքիչավոր մարմնի մկանները փոխում են ակնաբյուրեղի կորուրյունը
5. մարդու կրծքավանդակում կողոսկրերը կիսաշարժուն միացած են կրծոսկրին
6. մարդու լսողական վերլուծիչի բաժիններն են՝ արտաքին ականջը, գլխուղեղի կիսագնդերի քունքային բլում գտնվող լսողական կենտրոնը, ներքին ականջի կիսաբոլոր խողովակները
7. ողնուղեղը գտնվում է ողնաշարային խողովակում

56

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. պոպուլյացիայի աճի լոգիստիկ մոդելում պոպուլյացիայի աճող խտությունը նվազեցնում է յուրաքանչյուր առանձնյակի համար մատչելի ռեսուրսների քանակությունը
2. պոպուլյացիայի խտությունը պոպուլյացիայի աճը սահմանափակող գործոն է
3. արիոտիկ գործոնները շրջակա միջավայրի կենդանի բաղադրիչներն են և ներառում են ֆիզիկական և քիմիական գործոնները
4. պոպուլյացիայի էքսպոնենցիալ աճը բացատրում է պոպուլյացիայի աճը իդեալական միջավայրում
5. պոպուլյացիայի լոգիստիկ աճի դեպքում աճի արագությունը աճում է, եթե պոպուլյացիայի չափը մոտենում է տարրողունակությանը
6. բջջային շնչառությունը ածխաթթու զազը հեռացնում է մթնոլորտից և ընդգրկում օրգանական միացությունների սինթեզում

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. դոմինանտ ֆենոտիպ ունեցող առանձնյակի գենոտիպը կարելի է որոշել ռեցեսիվ ֆենոտիպ ունեցող առանձնյակի հետ խաչասերման միջոցով
2. միտոզի թելոֆազում քրոմոսոմներն ապապարուրվում են, ձևավորվում է կորիզալազանթը
3. հիպերինուլեստերինեմիան, որը բնութագրվում է արյան մեջ խոլեստերինի վտանգավոր բարձր մակարդակով առաջանում է դոմինանտ H ալելով
4. պլեոտրոպիայի ժամանակ յուրաքանչյուր գեն որոշում է միայն մեկ ժառանգական հատկանիշ
5. լրիվ դոմինանտության դեպքում երկիետերոզիզոտ զույգերի խաչասերումից ստացված սերնդում ճեղքավորումն ըստ ֆենոտիպի 1:2:1 հարաբերությամբ է
6. Գ.Սենդելի կատարած փորձերում մանուշակագույն և սպիտակ ծաղիկներ ունեցող ոլոռների խաչասերման արդյունքում F₁ սերնդի բոլոր բույսերն ունեին մանուշակագույն ծաղիկներ

58

Ունենք չորս փորձանոթ: Առաջին փորձանոթի մեջ լցված է գյուկոզ, 2-րդ փորձանոթի մեջ մալթօզ, 3-րդ և 4-րդ փորձանոթների մեջ՝ սախարոզ: 1,2,3 փորձանոթների մեջ ավելացրել են Բենեդիկտի ռեակտիվ և տաքացրել են: 4-րդ փորձանոթի լուծույթը տաքացրել են աղաթթավի հետ, չեզոքացրել նատրիումի հիդրօքսիդով և ավելացրել Բենեդիկտի ռեակտիվ: Նշել, բոլոր փորձանոթների համարները, որոնցում կառաջանա կարմիր-աղյուսագույն նստվածք:

- (59-60) Բակտերիայի զանգվածը $4,008 \cdot 10^{-12}$ գ է: Սպիտակուցները կազմում են բջջի զանգվածի 22%-ը:

59

Որքա՞ն սպիտակուցի մոլեկուլներ կան բակտերիայում, եթե դրանց միջին մոլեկուլային զանգվածը 50000 դալտոն է: Հաշվի առնել, որ 1 դալտոնը $1,67 \cdot 10^{-24}$ գ է: Պատասխանը բաժանել 1000 -ի:

60

Զանի^o հազար դալտոն է բակտերիայի սպիտակուցը կողավորող գենի զանգվածը: Ընդունել, որ մեկ նուկլեոտիդի միջին մոլեկուլային զանգվածը 310 դալտոն է, իսկ մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը՝ 100 դալտոն:

(61-63) Շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդն ամուսնացավ երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքաձև մազերով կնոջ հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Նշված հատկանիշները պայմանավորող գեները շղթայակցված չեն և ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ:

61

Գտնել գանգուր մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

62

Որոշել այդ ընտանիքում շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով և ալիքաձև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):
Պատասխանը քազմապատկել 100-ով:

63

Ընդամենը քանի՞ տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում, եթե նշված հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր գույգերում:

(64-65) Օրվա ընթացքում ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու օրգանիզմում յուրացվել է 864 լ Օչ: Ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օղի ծավալը մեծացել է 1,6 անգամ, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվող արյան ծավալը՝ 1,2 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 20 շնչառական շարժում, սրտի բոլորաշրջանի տևողությունը 0,8 վրկ. է և մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղվում է 65 մլ արյուն:

64

Քանի՞ ժամ է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

65

Մեկ օրվա ընթացքում քանի՞ լիտր արյուն են արտամղել փորոքները:

66

Մարզագետինը մեկ տարվա ընթացքում ստացել է $5 \cdot 10^{10}$ կՎ/հա արեգակնային ճառագայթման էներգիա: Մարզագետնի մեկ հեկտարի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 12000 կգ խոտ: Քանի՞ կՎ էներգիա է կուտակվում 1 գ առաջնային կենսագործածում, եթե ֆոտոսինթեզի օգտակար գործողության գործակիցը 0,6 % է:

67

Կարճառության դոմինանտ գենը հավերի մոտ միաժամանակ առաջացնում է կտուցի կարճացում: Հոմոզիգոտ ճաները կտուցի թերզարգացման պատճառով չեն կարողանում ծակել կճեպը և սատկում են ձվից դուրս չեկած: Կարճառ հավերի ցեղը բուծող ինկուբատորում ստացվել է 2700 ճուտ: Դրանցից քանի՞սը կլինի երկարատ:

Ալբինիզմը ժառանգվում է որպես առևտոսոմային ռեցեսիվ հատկանիշ: Հիվանդությունը հանդիպում է 1:10000 հաճախականությամբ: Գտնել պոպուլյացիայում հետերոզիզոտ առանձնյակների տոկոսը: Պատասխանը բազմապատկել 100-ով:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. բարակ աղիից հաստ աղի անցման տեղում գտնվում է կույր աղին
2. լյարդը մասնակցում է արյան մեջ գլյուկոզի հարաբերական կայուն խտության պահպանմանը
3. պեպսինը և ամիլազը գործում են թթվային միջավայրում, իսկ տրիպսինը՝ հիմնային
4. ստամոքսահյուրի աղաթքում ճեղքում է սպիտակուցները մինչև մոնոմերներ
5. մարդն ունի 12 փոքր աղորիքներ
6. կլումը պաշտպանական ռեֆլեքս է, որի արդյունքում կերակրափողի մուտքը փակվում է մակարուրդով

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից մեկը.

1. հումուլինը գենետիկորեն մոդիֆիկացված բակտերիայից արտադրված մարդու ինսուլինն է
2. էրիթրոպոետինը ճնշում է էրիթրոցիտների արտադրությունը
3. ռեստրիկցիոն ֆերմենտը կտրում է ԴՆԹ-ի շղթաները առաջացնելով ԴՆԹ-ի կտորներ, որոնք կոչվում են ռեստրիկցիոն հատվածներ
4. պոլիմերազային շղթայական ռեակցիան մի մերող է, որի միջոցով ԴՆԹ-ի որոշակի հատված կարող է ընտրվել և արագ կրկնապատկվել
5. կարճ տանդեմային կրկնությունների վերլուծությունը ԴՆԹ պրոֆիլավորման մերող է, որը համեմատում է կարճ տանդեմային կրկնությունների հատվածների երկարությունները գենոմի որոշակի հատվածներում
6. լիզազ ֆերմենտը կտրում է ԴՆԹ-ի շղթաները առաջացնելով ԴՆԹ-ի հատվածներ